Մորմոնի Գրքի Վարդապետության սերտում. Գնահատում 1

1 ՆԵՓԻ 3.7 – ՄՈՍԻԱ 18.8–10

Վարդապետության սերտման հղումներ

Հարցեր 1–3-ի համար գրեք համապատասխան հղման տառը՝ յուրաքանչյուր արտահայտության դիմաց հատկացված դատարկ տեղում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

Հիմնական արտահայտություններ	Սուրբ գրության հղումներ
_____ 1. «Նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները . . . օրհնված են բոլոր բաներում»:	a. 1 Նեփի 3.7
_____ 2. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:	b. 2 Նեփի 2.25
_____ 3. «Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:	c. 2 Նեփի 2.27
	d. Մոսիա 2.41
	e. Մոսիա 3.19

Սուրբգրային հիմնական արտահայտություններ

Հարցեր 4–6-ի համար լրացրեք բաց թողնված բառերը վարդապետության սերտման սուրբգրային հիմնական արտահայտություններում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

4. «Երբ դուք ձեր _____ _____ մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո _____ մեջ եք» (Մոսիա 2.17):

5. «[Հանեք] _____ մարդուն և [դարձեք] _____, Տեր Քրիստոսի _____» (Մոսիա 3.19):

6. «_____ Տիրոջ անունով՝ որպես մի _____, . . . որ դուք մտել եք նրա հետ _____ մեջ» (Մոսիա 18.8–10):

Կիրառումը կյանքի իրական իրավիճակներում

Գնահատման մնացած մասի համար կարող եք օգտագործել ձեր սուրբ գրությունները:

7–8 հարցերի համար նշեք վարդապետության սերտման մեկ կամ մի քանի հատված, որոնք կարող են օգնել մարդուն ստորև ներկայացված իրավիճակներում և բացատրեք, թե ինչպես կարող է օգնել այդ հատված(ներ)ի ճշմարտություն(ներ)ը: Այնուհետև հետևեք 9-րդ հարցի ցուցումներին:

7. Երիտասարդը կարևոր որոշում է կայացնելու, որը կարող է մեծապես ազդել նրա ապագայի վրա: Նա նյարդայնացած է և վստահ չէ, թե ինչ ընտրություն պետք է կատարել:

8. Երիտասարդ աղջիկն ապրում է մի իրավիճակում, որի պատճառով, ըստ իրեն, շատ դժվար է իր համար պահել Աստծո պատվիրանները: Նա ցանկանում է հնազանդ լինել, բայց դա չափազանց դժվար է թվում իր հանգամանքներում:

9. Ընտրեք 1 Նեփիի – Մոսիա գրքերի վարդապետության սերտման 12 հատվածներից որևէ մեկը և կիսվեք մի իրավիճակով, երբ այդ հատվածում ուսուցանվող ճշմարտությունները կարող են օգնել դեռահասին իր կյանքում:

Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները

Հարցեր 10–11-ի համար ցուցադրեք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքներն օգտագործելու ձեր գիտելիքն ու կարողությունը:

10. Ձեր խոսքերով համառոտ ամփոփեք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները:

    a. Գործեք հավատքով:

    b. Քննեք հասկացությունները և հարցերը հավերժության տեսանկյունից:

    c. Ձգտեք մեծացնել հասկացողությունն աստվածայնորեն սահմանված աղբյուրների միջոցով:

11. Ձեր ընկերը հարցադրում է անում, թե ինչու որոշ բաներ, որ իրեն վերջերս ուսուցանել են դպրոցում, կարծես հակասում են այն բաներին, որ Աստված ուսուցանել է սուրբ գրությունների և ժամանակակից մարգարեների միջոցով: Պատասխանեք հետևյալ հարցերին.

    a. Ի՞նչ կոնկրետ բաներ կարող է նա անել հավատքով գործելու համար:

b. Այս իրավիճակը հավերժական հեռանկարից դիտարկելն ինչպե՞ս կարող է օգնել նրան:

c. Վարդապետության սերտման հատվածներն աստվածայնորեն սահմանված աղբյուրների օրինակներ են: 1 Նեփի – Մոսիա գրքերի վարդապետության սերտման ո՞ր հատված(ներ)ը կարող են օգնել ձեր ընկերոջը: Ինչպե՞ս:

Ազդեցությունը ձեր կյանքի վրա

12. Այս կիսամյակի ընթացքում ձեր ուսումնասիրած վարդապետության սերտման ո՞ր հատվածն է ազդել ձեր վրա և ինչո՞ւ: Այն ի՞նչ ազդեցություն է ունեցել ձեզ վրա: Այդ հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_522-teacher_handout-1